



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Արմվյան 52^ա • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52^а • 52^а Abovyan,
0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37, armphilology@ysu.am, www.ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ Յ

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏՈՒՐՀՐԴԻ՝
2022 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ՝
Օրակարգում՝

1. Հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էր Երևանի պետական համալսարանի ռեկտոր պարոն Հ. Հովհաննիսյանը:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 30-ը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ: Այնուհետև առաջարկ եղավ գիտխորհրդի նիստը վարող նախագահ ընտրել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Գաբրիելյանին: Վերջինս տարեկան հաշվետվության համար ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանին:

Պրոֆ. Ա. Ավագյանը իր խոսքում մասնավորապես նշեց:

Հաշվետվությունը ընդգրկում է 2021թ. դեկտեմբերից մինչև 2022 թ. դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանը:

Ֆակուլտետի կառուցվածքը.

ա) պրոֆեսորադասախոսական կազմը- 10 պրոֆեսոր, 39 դոցենտ, 12 դասախոս և ասիստենտ, 7 ժամավճար, որոնցից 1 դրույքով՝ 16, 0.75 դրույքով՝ 16, 0.5 դրույքով՝ 15, 0.25 դրույքով՝ 14 դասախոս:

բ) ուսանողների քանակը- առկա բակալավրիատ՝ 231, առկա մագիստրատուրա՝ 43, հեռակա բակալավրիատ՝ 34, հեռակա մագիստրատուրա՝ 11, ընդամենը՝ 319 ուսանող, ասպիրանտներ՝ 8 առկա, 6 հեռակա, հայցորդներ՝ 14: Արտասահմանից

ունենք 12 ուսանող, որից 9-ը՝ Վրաստանից, 1-ը՝ Ռուսաստանից, 1-ը Չինաստանից, 1-ը ԱՄՆ-ից: Արտասահմանից ունենք 2 ասպիրանտ՝ Իսրայելից և Իրանից:

Ֆակուլտետի աշխատանքն ըստ սոցիարցումների գնահատվել է 4.62, դեկանատինը՝ 4.53, առցանց կրթության կազմակերպման միջին գնահատականը՝ 3.73:

Ֆակուլտետի 2 պրոֆեսորներ ԵՊՀ գրահրատարակչական խորհրդի անդամներ են: Համալսարանի կայքում տեղադրվել է մասնագիտությանը վերաբերող տեսաժապավեն: Ֆակուլտետը կազմել և հրատարակել է դիմորդների բուկլետ:

Հաշվետու շրջանում կայացել է ֆակուլտետային գիտխորհրդի 10 նիստ, որտեղ քննարկվել են ուսումնական, գիտական, կազմակերպչական, աշխատանքային, կանոնակարգային կարգապահական տարաբնույթ հարցեր: Նիստերի արձանագրությունները տեղադրվել են ԵՊՀ կայքէջում:

Ֆակուլտետում գործող 012 «գրականագիտություն» գիտական աստիճաններ շնորհող խորհուրդն ունեցել է պարբերական նիստեր, պաշտպանվել են դոկտորական 0, թեկնածուական 3, որոնցից ժուռնալիստիկայից 2, գրականագիտությունից՝ 1, աշխատանքներ, որոնք շատ քիչ են, ընթացքի մեջ գործեր չկան: Այստեղ խնդիր է նաև խորհրդի անդամների լրացումը՝ հանրապետությունում աստիճան ունեցող մասնագետներ չկան: Այդուհանդերձ գիտական գործունեությունը շարունակվել է ֆակուլտետում. մեր շատ դասախոսներ ԵՊՀ-ից դուրս գործող աստիճանաշնորհող խորհուրդների անդամներ են, գրախոսներ, կարծիքներ ու երաշխավորություններ են տվել այլ վայրերից մեզ ուղարկված գրքերին, ուսումնասիրություններին, ամբիոններում քննարկվել և արտաքին կարծիքներ են տրվել գիտական թեզերի, մենագրությունների: Չերկարացնելու համար միայն նշեմ, որ ցուցադրվող հրավիրատոմսերը վկայությունն են այն բանի, որ ֆակուլտետը համագործակցում է տասնյակ գիտական և կրթական հիմնարկների ու կառույցների հետ, որտեղ առանձնանում են Ակադեմիայի լեզվի և գրականության ինստիտուտները, Մատենադարանը, գրողների միությունը, Աբովյանի, Իսահակյանի, Դեմիրճյանի, Չարենցի անվան տուն-թանգարանները, Հայ բարեգործական ընդհանուր միությունը, մանկիավարժական համալսարանը:

Մեր աշխատանքները, բնականաբար, հիմնականում ուղղված են եղել ուսումնական դասապրոցեսները կազմակերպելուն՝ միշտ գերակայություն տալով դասերի կայացմանը, այն որակական դարձնելուն, մեթոդական ժամանակակից հնարավորությունների օգտագործումներին: Միանգամից ասենք, որ այստեղ ունենք դժվարություններ, որոնք հիմնականում կապված են ուսանողների հաճախումների հետ, որն իր հերթին պայմանավորված է հազար ու մի հոգսերի հետ՝ տրանսպորտ, հեռանկարի անհայտություն, մասնագիտական գրականության պակաս և այլն:

Դասերի պարապմունքներին զուգահեռ ֆակուլտետը ծավալել է գիտական, կրթական և ուսումնական լայն գործունեություն: Համառոտ թվարկենք դրանց մի մասը՝ բոլորն էլ ուղղված մեկ նպատակի, հետամուտ նույն խնդիրներին՝ որքան հնարավոր է դասերից դուրս նպաստել ուսանողների գիտելիքների, մասնագիտության և մասնագիտացումների ընդլայնմանն ու խորացմանը:

Նախ, ֆակուլտետն իր ակտիվ մասնակցությունն է բերել ռեկտորատի կենտրոնական մասնաշենքում գործող այլնայլ կազմակերպությունների ու բաժինների, ինչպես և այլ ֆակուլտետների կողմից կազմակերպված միջոցառումներին ու աշխատանքներին: Լայն ընդգրկումներ են պարունակել ԵՊՀ-ից դուրս զանազան հիմնարկությունների ու կառույցների հետ աշխատանքները: Էլ ավելի ծավալուն են եղել ներֆակուլտետային միջոցառումները: Այսպես, թե՛ հանրապետության տարբեր շրջաններում, թե՛ Երևանում, և թե ֆակուլտետի ներսում կայացել են տասնյակ հանդիպումներ-դասախոսություններ դպրոցների աշակերտության և ուսուցչական կորեկտիվների հետ: Ֆակուլտետ հրավիրված տարբեր դպրոցների աշակերտների համար դասախոսություններ են կարդացվել Րաֆֆու, Մուրացանի, ազգային էպոսի և այլ թեմաներով: Վերջին հանդիպումը կայացավ նոյեմբերին՝ լեփ-լեցուն դահլիճում, լսարանի մի մասը ոտքի վրա էր մնացել: Նշենք, որ այստեղ ևս անելիքներ կան, որոնցից մեկն էլ կարող է ճանաչողական և կողմնորոշիչ ժապավենի ստեղծումը լինել, որը կարող է պրոպագանդել ԵՊՀ-ին պարբերաբար էթեր արձակվելով: Այս ոլորտը շեշտում ենք առաջինը, քանի որ այն կապված է դիմորդների ապահովման հետ:

Հաշվետու շրջանում ֆակուլտետը կազմակերպել է հանրապետական և միջբուհական գիտաժողովներ՝ «Մաթևոսյանական ընթերցումներ-4» (գիրքը տպագրման ընթացքի մեջ է), «Հայկական հեքիաթը համաշխարհային մշակութային համատեքստում» (նյութերը լույս կտեսնեն «Բանբերի» հերթական համարում), Համազգային հայ կրթական և մշակութային միության և մանկավարժական համալսարանի հետ՝ երկօրյա «Պոլսահայ գրականությունը 20-րդ դարի կեսից մինչև մեր օրերը», ՀՀ Ակադեմիայի հասարակագիտական բաժանմունքի, գրականության ինստիտուտի համագործակցությամբ՝ եռօրյա «Չարենցը և իր ժամանակաշրջանը»: Գրողների միության հետ համագործակցելու շնորհիվ տպագրվել է «Ես եմ հիմա» գիրքը:

Առանձնահատուկ երևույթ էր ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի կողմից ՀՀ գիտության կոմիտեի թեմատիկ շրջանակներում Ծաղկաձորում կազմակերպված եռօրյա «Արդի հայերենի քերականության հիմնախնդիրները» գիտաժողովը, որին մասնակցեցին ինչպես հանրապետության առաջատար լեզվաբանները, այնպես էլ մի մի շարք ուսանողներ:

Ֆակուլտետը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, Գրականության և արվեստի թանգարանի համագործակցությամբ Երևանում և Իջևանում կազմակերպել է Ա. Չոպանյանի 150-ամյակին նվիրված գիտաժողով, ի դեպ՝ Երևանի քաղաքապետարանը արձագանքել է դպրոցներից մեկը Չոպանյանի անվամբ կոչելու մեր դիմումին, զեկուցմամբ մասնակցել լեզվի ինստիտուտում կայացած «Ջահուկյանական ընթերցումներին»: Ֆակուլտետում կայացել է «Դանթեական օր» միջոցառումը (Սլավոնական համալսարան հետ):

Մեր դասախոսները, համագործակցելով Խ. Աբովյանի տուն-թանգարանի հետ, երեք զեկուցումներ են կարդացել Թբիլիսիում՝ Հովհ. Թումանյանի տուն- թանգարանի

դահլիճում, որին մասնակցում էին Վրաստանի պառլամենտի դեպուտատներ, Վրաստանի Հայոց թեմի առաջնորդը:

Ֆակուլտետում կազմակերպվել են Հ. Կարապենցի միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուի, Ստ. Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» գրքի վերահրատարակման շնորհանդեսները: Ֆակուլտետը մասնակցել է մեր շրջանավարտ Զ. Առաքելյանի <Հայկական Քաշաթաղ> անհատական լուսանկարչական ցուցահանդեսին, Եղիշե Չարենցի տուն-թանգարանի կազմակերպած հորելյանական միջոցառումներին, Ֆրանց Վերֆելի <Երեմիա. Լսեք Ձայնը», Վ. Դավթյանի, Վահան Թեքելյանի «Յոդվածների ժողովածու» գրքերի շնորհանդեսներին, Վահագն Դավթյանի ծննդյան 100-ամյակի միջոցառումներին, «Գիտական Արցախ» պարբերականի նյութերի քննարկումներին և կարծիքներ տվել:

Ֆակուլտետի ամբիոններում մշակվել և ուսումնական մաս են ներկայացվել բակալավրիատի և մագիստրատուրայի 1-ին կուրսեցիների ուսումնական պլանով նախատեսված դասընթացների պլանները, գնահատման չափանիշները, հանձնարարվող գրականությունը, կազմվել են 2022-23 ուստարվանից գործող շաբաթական սեմինար-քննարկումների թեմաները, ուսումնական մաս է ներկայացվել կրթական ծրագրերի, ուսումնական պլանների խմբագրված տարբերակի վերաբերյալ առաջարկներ: Բոկ է ներկայացվել ֆակուլտետին կից գործող աստիճանաշնորհող մասնագիտական խորհրդի թարմացված կազմը: Ֆակուլտետը մասնակցել է կրթական ծրագրերի ղեկավարների համար կազմակերպված առցանց քննարկումներին, հայ գրականության ամբիոնը հայտ է ներկայացրել «Արդ ալ Ազիզ» հիմնադրամի աջակցությամբ արաբերեն թարգմանելու Մ. Մեծարենցի պոեզիան:

Ֆակուլտետը ՀՀ ԿԳՄՍ բոկի նախագահին է ներկայացրել «Հայ գրականության մասնագիտացումների տարբաժանմանը» վերաբերող գրություն՝ կատարված սխալ տարբաժանումը ճշտելու առաջարկ-հիմնավորումով (հանված է «հայ հին գրականություն» պարբերացումը):

ՀՀ քննչական կոմիտեի խնդրանքով լեզվաբան մասնագետ է տրամադրվել դատական փորձաքննության համար:

Ֆակուլտետը կազմակերպել է մի շարք միջոցառումներ, թվարկենք միայն մի մասը. «ուսանողի օրվա» կապակցությամբ հանդիպում 2012 ուստարվա շրջանավարտների և Հովհ. Թումանյանի տուն-թանգարանի աշխատակիցների հետ, բաց դաս սփյուռքահայ բանասեր Հ. Նալպանտյանի, Հ. Ներզեթյանի հետ, ընդունել է Ջապել Եսայանի անվան լսարանի հովանավորներին, Մերզեթյան ինստիտուտի աշխատանքային կոլեկտիվի ստեղծագործող ուժերի համար կարդացել երեք մասնագիտական դասախոսություններ, համագործակցելով Մեդրու շրջանի հետ՝ սահմանել պրոֆ. Ռ Սաքապետոյանի կրթաթոշակ, Գուրգեն Մելիքյանի հիմնադրամի հետ՝ Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, հայոց ցեղասպանության 107 տարելիցի կապակցությամբ մասնակցել Ուրուզվայի դեսպանության կազմակերպած միջոցառմանը:

Առաջին կուրսեցիներին սեպտեմբերի 1-ին տարվել է Կոմիտասի անվան պանթեոն, շրջանավարտ բակալավրերին և մագիստրանտներին՝ Չարենցի կամար՝

դիպլոմներ հանձնելու, ֆակուլտետի ուսանողության համար անց է կացվել «Տրնդեզ»: Ֆակուլտետից մի քանի դասախոսներ անդամակցել են ԿԳ նախարարության մրցութային հանձնաժողովների աշխատանքներին:

Ֆակուլտետում անց է կացվել դպրոցականների հանրապետական օլիմպիադա, մասնաշենքի առաջին հարկում տեղադրվել է ակադեմիկոս Մ. Մկրյանի կիսանդրին: Մի քանի օր առաջ հանդիպում կայացավ ԵՊՀ մագիստրատուրայի բաժնի վարիչի հետ: Ֆակուլտետը նախապատրաստել և արխիվացման է հանձնել մինչև 2017 թ. սովորած ուսանողների գործերը:

Ֆակուլտետում անց է կացվել «Ոսկե սերմեր» մրցանակաբաշխությունը, հաղթողները դրամական պարգևատրման են արժանացել (հովանավորը՝ «Գերմանիայի հայ կանանց միություն»): Դասախոսների և ուսանողների նվիրատվությամբ հարստացել է «Վերնատուն» ընթերցասրահը:

Այժմ ֆակուլտետում աշխատանքներ են տարվում «Արի՛ ԵՊՀ» էքսպոն կազմակերպելու համար, առաջին ուսումնական տարում մագիստրոսական թեզերը այլ կազմակերպությունների և ֆակուլտետների համագործակցությամբ իրականացնելու, ուսումնական ծրագրերում հնարավոր փոփոխություններ, լրացումներ կատարելու ուղղությամբ:

Ֆակուլտետի ամբիոնները հաշվետու շրջանում տպագրել են գրքեր և գիտական հոդվածներ, գրել մենագրություններ՝ ժամանակակից հայոց լեզվի ամբիոն՝ 7 մենագրություն, 1 դասագիրք, 1 ձեռնարկ, 15 հոդված: Այժմ աշխատանքներ են տարվում «Արդի հայերենի բացատրական նոր բառարան» և «Արևելահայերենի և արևմտահայերենի բառգիրք» համակարգչային շտեմարան ստեղծելու ուղղությամբ (առկա են պայմանագրեր ԵՊՀ-ի, Կանադայի հայոց թեմի և «Մանդակունի» կազմակերպության միջև): Մերտ կապեր կան ամբիոնի և «Զանգակ» գրահրատարակչության միջև: Ամբիոնը մասնակցել է «Հայերենը որպես օտար լեզու C1, C2» դրամաշնորհային ծրագրին, կազմած թեստը շահել է I մրցանակ:

Ամբիոնի մագիստրական ծրագրերում ավելացվել կամ լրացվել են չորս նոր դասընթացներ:

Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնը տպագրել է 33 գիտական հոդված, վերանայվել են առարկայական ծրագրերը և քննատոմսերը, կազմակերպել է «Լավագույն գրաբարագետ» ուսանողական օլիմպիադան, իրականացնում է գիտության կոմիտեի պայմանագրային թեմա, հուշագիր է կնքել «Գիտական հետազոտությունների զարգացման կենտրոնի» հետ, որի արդյունքում շրջանավարտ ուսանողը կարող է աշխատանքով ապահովվել: Թեկնածուական թեզեր են պաշտպանել ամբիոնի 2 հայցորդներ, իր ուժերով վերանորոգել է ամբիոնը, այն հարստացրել մասնագիտական գրքերով:

Ակ. Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնը հրատարակել է 4 մենագրություն, դասախոսությունների 1 ժողովածու, 23 գիտական հոդվածներ (3-ը միջազգային շտեմարաններում), զեկուցումներով հանդես եկել գիտաժողովներում: Ամբիոնը բուհական և ավագ դպրոցի համար պատրաստում է դասագրքեր: Ամբիոնի դասախոսը

Ռուսաստանի Դաշնությունում կարդացած զեկուցման համար 1-ին մրցանակ է ստացել:

Հայ նորագույն գրականության և գրաքննադատության ամբիոնը ԵՊՀ հրատարակչությանն է ներկայացրել «Մաթևոսյանական ընթերցումներ» ժողովածուն: Ամբիոնի անդամները մասնակցել են գիտաժողովների, տպագրել 1 գիրք, 16 գիտական հոդվածներ, զեկուցումներով հանդես եկել մարզերում, վերամշակել ասպիրանտական մինիմում և բակալավրիատի սեսիոն քննությունների քննական տոմսերը, ակտիվ մասնակցություն ցուցաբերել ՀՀ գրողների միության աշխատանքներին:

Գիտական նստաշրջաններ, հանդիպումներ և միջոցառումներ են կազմակերպել նաև ֆակուլտետի ուսանողական խորհուրդն ու ուսանողական գիտական ընկերությունը, որոնք ունեն իրենց ֆեյսբուքյան էջը, իրականացնում են ուսանողական կյանքին, մշակութային, սպորտային, սոցիալական ոլորտներին, գիտական ու կրթական խնդիրներին վերաբերող գործընթացներ, հանդիպումներ գրական-մշակութային ճանաչված դեմքերի հետ, կայացել են «գրական դատեր»:

Այժմ մի քանի խոսք մեզ ամենից շատ հուզող բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ընդունելության խնդիրների մասին, ինչպես նաև մի քանի առաջարկներ:

Այս տարի բակալավրիատի առաջին կուրս են ընդունվել 44 հոգի (նախկինում այդ թիվը 140 է եղել, և կուրսից 40 հոգի անվճար էր ուսանում), սա այն դեպքում, երբ հանրապետությունում մանկավարժների ահռելի պակաս կա: Պատճառները շատ են՝ սոցիալական ծանր կացություն, մտավորական մարդու հանդեպ ցուցաբերվող արհամարհանք հասարակության կողմից, բայց մանավանդ այն աղքատիկ աշխատավարձը, որ սպասվում է շրջանավարտին: Կա ևս մեկ գործոն՝ ուսման վարձը, որը հասնում է շուրջ 650 հազարի, մինչդեռ այդ թիվը մանկավարժականում կազմում է 400 հազար: Ընդ որում՝ նրանք ունեն նաև «Ամառային ճամբար», որի ընթացքում շատ ուսանողներ բուհի հաշվին լինում են արտասահմանյան երկրներում:

Հայագիտական ոլորտը արտասահմանից դրամաշնորհներ չի կարող ստանալ: Գործնական օժանդակություն պետք է կատարեն համալսարանը և պետությունը: Արտասահմանյան հայագիտական կենտրոնները, որ ըստ էության 1-2 մարդուց է բաղկացած, նույնպես անկարող են կոնկրետ օգնություն ցուցաբերել ո՛չ նյութական և ոչ էլ գիտական (եղած մի քանի ուժեր մեր նախկին սփյուռքահայ շրջանավարտներն են):

Նույնքան դժվարին կացության մեջ է հայտնվել ասպիրանտների ընդունելությունը: Մարդիկ չեն դիմում անգամ անվճար տեղերի համար: Ոչ մի դասախոս չի դիմում դոկտորանտուրա՝ եղած պայմաններն ուղղակի ծիծաղելի են (չնչին աշխատավարձ և դասերի պարապում): Մագիստրատուրայում ուսանելն առհասարակ անիմաստ է դարձել: Հանուն ինչի՞ վճարել մեկ միլիոն, երբ այն որևէ արտոնություն կամ առավելություն չի տալիս: 2022-23 ուստարվանից ֆակուլտետը առաջարկել է անցնել մագիստրոսական 1.5 տարվա ուսուցման: Ի՞նչ կտա՞ դժվար է ասել: Ֆակուլտետում ստեղծվել է ուսանողների հաճախումներն ստուգող հանձնաժողով. արդյունքներն անմխիթար են: Ուսանողների մեծ մասը աշխատում է:

Չի աշխատի՝ չի վճարի վարձը: Էլ չենք խոսում այն մասին, որ 7-8 ժամ աշխատելուց հետո ինչպես պետք է դաս լսի, գիրք կարդա, հանձնարարություն կատարի:

Ելնելով այս ամենից՝ առաջարկում ենք համալսարանում կամ նրա որոշ մասնագիտությունների համար սահմանել ուսուցման 5 տարի՝ պարտադիր բոլորի համար, որի մեկ տարին կարելի է մագիստրոսական կրթություն համարել: Սա նաև համալսարանի բյուջեին հավելում կբերի, ուսանողների մեծ մասը, ինչպես հիմա է, չի գրկվի հետագայում ասպիրանտուրա ընդունվելուց, գիտությամբ ու դասախոսական աշխատանքով զբաղվելուց, քանի որ միայն բակալավրիատ ավարտածները հայտնվում են հենց այդ վիճակում:

Ֆակուլտետի կոլեկտիվը ափսոսանք է հայտնում «Հայագիտական հարցեր» ամսագրի հոչակած սահմանափակումների կապակցությամբ, ըստ որի այսուհետ հայագիտական նյութեր, որոնք վերաբերում են լեզվի և գրականությանը, չեն տպագրվելու այնտեղ:

Կարծում ենք, որ շատ են նաև կատարվող և ենթադրվող «նորարարությունները»: Կրթական համակարգը կայունություն է սիրում, որտեղ ամենակարևոր դերում պետք է լինի պրոֆեսորադասախոսական կազմը՝ բարձր կվճարվի, բարձր որակ կտա:

Կարծում ենք՝ այս տարվա հոկտեմբերին ռեկտորատի կողմից առաջին կուրսեցիների համար կազմակերպված համերգը չորս տարբեր վայրերում անիմաստ էր: Բավական է ասել, որ մեր մասնաշենքի բակում ժամը 6-ին ընդամենը ներկա էին 3 հոգի (հո շրջաններից չէին գալու երաժշտություն լսելու):

Վերադաս մարմիններից երբեմն ստացվում են գրություններ, որոնցից մեկը, օրինակ, պահանջում էր «...ադրբեջանական ներխուժման մասնակիցների տվյալները ներկայացնել...»:

Ամփոփենք: Ինչպես նկատելի էր, անուններ չկային մեր հաշվետվության մեջ, քանի որ ողջ աշխատանքը կատարվել է ֆակուլտետի միասնական ջանքերով, որտեղ առաջատարներն այստեղ նստածներն են եղել: Հավատացած ենք, որ այդպիսի միասնականությամբ էլ ֆակուլտետը կգործի առաջիկայում:

Դեկանի հաշվետվությունից հետո ելույթ ունեցողները /պրոֆ., պրոֆ. Ալ. Մակարյանը, Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Տեր-Մինասյանը և ուրիշներ/ բարձր գնահատեցին հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի՝ հաշվետու ժամանակաշրջանում կատարած բեղմնավոր աշխատանքն ու իրենց շնորհակալությունը հայտնեցին ֆակուլտետում տիրող բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի և ուսումնական գործընթացի կատարելագործման համար: Գիտխորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն դեկանի հաշվետվությունը գնահատեց դրական:

Նիստն ամփոփեց Երևանի պետական համալսարանի ռեկտոր պարոն Հ. Հովհաննիսյանը:

Նա գոհունակություն հայտնեց հայ բանասիրության ֆակուլտետում ծավալված գիտաուսումնական աշխատանքների և առաջընթացի համար, շնորհակալություն հայտնեց դեկանին՝ պրոֆ. Ա. Ավագյանին: Համալսարանի ռեկտորը, սակայն, ընդգծեց,

որ անհրաժեշտ է համառ աշխատասիրությամբ ու ինքնանվիրումով հասնել նոր նվաճումների, վերացնել առկա որոշ թերացումները: Պարոն Հ. Հովհաննիսյանը անդրադարձավ նաև դեկանի ու ելույթ ունեցողների մատնանշած՝ ֆակուլտետում առկա դժվարություններին, ցավոտ խնդիրներին: Ռեկտորը ներկաներին տեղեկացրեց, որ ինքը առաջարկել է ուսուցիչների ատեստավորման չափորոշիչների մեջ հատուկ սահմանել մագիստրոսական կրթության գերակայությունը, որպեսզի ուսանողները ևս շահագրգիռ լինեն ուսումը մագիստրատուրայում շարունակելու: Պարոն Հ. Հովհաննիսյանը կարևորեց նաև ամբիոնների կողմից բառարանների ստեղծումը՝ հայտնելով, որ ինքը պատրաստ է օժանդակելու նմանատիպ նախաձեռնությունները: Ռեկտորը հավելեց նաև, որ հատուկ ուշադրության է արժանանալու հայագիտության ոլորտը՝ ներկաներին կոչ անելով ակտիվորեն մասնակցել հայտարարվող դրամաշնորհներին: Պարոն Հ. Հովհաննիսյանը նաև տեղեկացրեց, որ հունվարի մեկից 10 տոկոսով բարձրացվելու են աշխատակիցների աշխատավարձերը: Ռեկտորը նաև տեղեկացրեց, որ համալսարանի տարբեր մասնաշենքերում շարունակվում են վերանորոգման աշխատանքները:

Պարոն Հ. Հովհաննիսյանը պատասխանեց նաև գիտխորհրդի անդամներին հուզող այլ հարցերի ևս:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ
ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՅԱՆ**